

տատասակի հետ խառն ցանելով, միշտ աշուղի մէջ ենք ընկնում՝ ամեն տեսակ հնարաւորութիւններից շարունակ հիամթաափուելով, և միայն անօդուտ ջանքեր անելով, և երբէք ստոյգ հաւատ չունենալով, թէ արդեօք մեր աշխատութեան անջօշափելի պառազ կարող է աշխարհի մէջ գէմ մի հոդուն յագուրդ տալ:

Մենք այս դարավերջում զրեթէ չենք ճանաչում ուրախութիւնը և զրեթէ երբէք չենք տեսնում բախտաւոր մարդկանց գէմքեր, և այն շատ պատճառներով, որոնց մասին խօսելը երկար կը լինէր: Մեր բժիշկ պաշտօնակիցները ասում են, թէ ներկայումն մենք ամենքս ներկատէնիկներ ենք, ջղաթոյլ ենք, գուցէ ծշմարիտ է այս: Բայց երբ որ մտաւոր և ձեռքի աշխատութիւնները փոխ ընդ փոխ կը կատարուին, մեր յաջորդները այլ ևս թոյլ ջղեր չեն ունենայ: Գուցէ նոքա բախտաւոր լինին: Յամենայն գէպս նոքա առողջ մարդիկ կը լինին:

Այս, այն օրուանից, երբ մտաւոր և ձեռքի աշխատութիւնները կը հաշտուին, կը միտորուին, կը գրկախառնուին, այն ժամանակ մարդկային ազգը մեծ քայլ կանէ ընդ առաջ գնալու ուրախութեան, բարոյական ուրախութեան՝ որ ինքնին կատեղծուի մեր փոքր ընկերների հետ համերաշխութեան ըզդացումից, որոնց հետ միասին կաշխատենք և մի բախտի տէր կը լինենք:

Ս. Ս.

— • • • —

ՄԻ ՃՆԱԳԱՐԵՐԵՐԵՐ

ԴՊԲՈՑՆԵՐԸ *

Մենք ամեն ինչ պատրաստի ստանում ենք արևմտաքից՝ և՛ ուսումն, և՛ ուսուցման եղանակ, և՛ գիտութիւն, և՛ մանկավաճութիւն, և գործ ենք դնում մեր գպրոցներում: Բայց մեզնից շատ քէքը կարող են երեակայել, թէ դոքա ինչ երկար փորձերի, արեան և քրտնքի գնով են ձեռք բերուել Եւրոպայում: Երկար ու յամառ պատերազմ է մղել նա լուսաւորութեան համար և յաղթութեան ամեն մի քայլ անթիւ զոհեր, ահազին ջանք ու չարշարանք է պահանջել: Ուստի աւելորդ չի լինի, եթէ համառական ընթերցողների առաջ գնենք միջին դարերի գպրոցական կեանքի նկարագիրը:

Երկար ժամանակ այնպէս էին կարծում: որ

* Նիմթը քաղուած է Առջևա շաբաթաթերթից:

միջին դարերում անծանօթ էր ժողովրդական կըրթութեան գաղափարը: սակայն այդ կարծիքն այժմ դրականապէս հերթուում է: Նոյն իսկ թ. դարի ամենամրրկալից ժամանակ Եւրոպայի շատ գիւղերում կային ուսուցիչներ, որնք մանկանց սովորեցնում էին կարգալ, գրել և հաշիւ: Միջին դարերի կիսում գիւղական ուսումնարանները նորութիւն չեն: Բայց մեծ նշանակութիւն չպիտի տալ այդ իրողութեանը, որպէսուե միջնադարեան ստորերկրեայ մութ, խոնաւ, գարշահու գպրոցները և նոցանում աւանդուած ուսումը շատ չեռի էր և տարբեր մեր այժմեանից: Քիչ թէ շատ լատիներէն խօսել և գրել մի քիչ օրէնսդրութիւն, տրամաբանութիւն, տօմարագիտութիւն, թուարանութեան նման մի բան, երեակայական աշխարհագրութիւն և չափազանց շատ երեցողութիւն՝ աշա թէ ինչ էին ստանում այն ժամանակուայ աշակերտները, և այն երկար տարիների ընթացքում: Զմոռանանք ասել, որ այդ բոլոր ուսմանց վերջնական նպատակը աստուածարանութիւնն էր: Աշխարհագրութիւնը լաւ գիտութիւն է, ասում է Յակոբ Բիտրակցին, որովհետեւ նա մեզ սովորեցնում է ճանաչել այն երկիրը, ուր շուտով մեր մարմնները պիտի իջնեն: Վատ չէ և մուտարանութիւնը, որովհետեւ նա ցցյ է տալիս, թէ որքան չնչին են մեր կենաց օրերը: Գիւղական գպրոցը միջին դարում անպայման լատինական է: մայրենի լեզուի մասին խօսք անգամ չկայ մինչև ժէ: Դարը Պարգալ և հասկանալ՝ որ այնքան բնական պահանջ է մեր ժամանակում, այն ժամանակի մարդկանց համար բոլորովին տարբեր բաններ էին: * Միջին դարերում կարգացածը հասկացողը մատով էր ցցյ տրուում: և այս ոչ միայն հասարակ ժողովրդի մէջ, այլ նոյն իսկ բարձրաստիճան հոգևորականների գասում: Հենրիկոս Բ. մի անգամ ծածուկ ընջել է տալիս ննջեցելոց աղօմքի միջից pro famulis et famulabus (վասն ծառայից և աղանենեայց) բառերի առաջին վանկերը, և Պատերբրոնցի Մէցնիերկ եպիսկոպոսը պատրագի ժամանակ հանդիսաւոր կերպով երգում է «pro mulis et mulibus» (վասն իշոց և մատակաց), Սակայն միայն սրանք չեն այդ ժամանակուայ գպրոցների պակասութիւնները: Լուսաւորութեան այդ օճախները, ուր առկայժեալ հուրը հազիւ մի քիչ լուսաւորում էր շրջապատող մասամուղը: Ենթակայ էին ամեն տեսակ պատահանների: ահա վրայ

* Դժբաղդաբար մեր մէջ միայն միջին դարերում է այդպէս եղաւ: Գաւառագի քահանային մի եպիսկոպոս առաջարկում է կարգալ աւետարանից մի կտոր: Կարուում է: Առաջարկում է թարգմանել կարգացածը: Քահանան զարմացած ամենայն սառասրութեամբ պատասխանում է: „Ճան կարզալ կարդալ է, մըուիմ քըզի, կարդալ վեռն ևս խասկնամյ որ ես խասկնամյ”:

Հասաւ մի փոթորիկ՝ կամ պատերազմն կամ հաշլածանք՝ կամ սովոր կամ համաձարակ, և ամէն բան անյայտանում էր, Նրկար տարիների ընթացքում ամէն մի բանասէր նորից պիտի սկսէր միւնյի գործը, որ գուցէ մի ուրիշն արդէն բաւականին յառաջ էր վարել, Խնչ խօսք, որ այսպիսի անջատ անջատ աշխատանքի ժամանակ շատ ծանր պիտի յառաջ գնար ուսման գործը, Բայց այսքան արգելքներ չյուսահատեցրին մարդուն և նա հասաւ ուսումնական կեանքի երկրորդ շրջանին:

Քոլորովին այլ տեսարան է բացուում մարդու առաջ, երր ծնունդ են առնուում համալսարաները և սերունդ սերնդի յետևից մշակում է գիտութիւն և արուեստ Միջին դարերի երկրորդ կիում խարիսուլ, հին և գետանափոր գլուղների վերայ բաձրանում է երկրորդ յարկ, ուր աւելի շատ օգ և լոյս կարսայց այնտեղ մտնել կարելի էր միայն այն ներքին այրն այցելելուց յետոյ, Ամեն մի ապագայ փաստարան, բժիշկ երկրաշափ թէ ուսուցիչ սկզբում ապագայ քահանայացուի հետ պիտի ենթարկուէր կրօնաւորական բարոր կարգերին, Բոլոր գիտականներն, առանց բացառութեան, ամուրի խստապահ կեանք պիտի վարէին, Փարիզի համալսարանում բժշկապետը պահկուելու իրաւունք է ստանում միայն ժ. գարում, իսկ իրաւարաները, արուեստագէտները միայն ժ. գարում, միայն ժ. գարում, առուեստագէտները միայն ժ. գարում, առուեստագէտները միայն ժ. գարում, պիտի կրեն երաժշտութիւն սովորելու համար, ասում էին սխօր duxit versus indementium (Խելագարուելով ամուսնացաւ):

Դժուարին և փշալից էր միջին դարերում կրթութեան ձանապարհը, ոռոգուած քրտինք ու արինով, Երկիւղից շունչս էր կտրուում, զրում է Բանիքակիոս, երբ մտարերում եմ quadrinum-ը ուսուցման մէջ ևս առաջին տեղը բանում էր երգեցողութիւնը, «Արքան ծեծ, տանջանք պիտի կրեն երաժշտութիւն սովորելու համար», ասում է լատինական ասացուածքը, Զայնանիշ համարուած գծերն և կէտերը միանգամայն անտանելի բաներ էին և, առանց նախապէս եղանակը սովորելու, անհասկանալի, մինչև որ Գրիէ Արեցցին ստեղծեց այժմուայ երաժշտական կարգը, բայց այդ նորութիւնը նրան արժան չնախեց՝ քիչ մնաց նրան հերձուածող հրատարակէին, որովհետև նորա աշակերտները ձայնանիշներին նայելով ամէն մի եղանակ առանց նախապէս վարժուելու երգում էին:

Երկրորդ տեղը բանում էր մանկան բոլորովին անհասկանալի լեզուով մեքենայօրէն աղօթքներ, ամրող ուժ կանոն սաղմօսը, աւելի ուշ՝ ամրող օրէնքը եր և տրամարանութիւնը բերան անել տալիք, մի տանջանք, որի առաջ ներկայ մանկավարժութիւնը սարափած յետ կբաշուի, Ոչ նուազ տանջանք էր և քերականութեան ուսումը, Ազէքսանդր Բելլերտացու Doctrinale դասագիրքը ամենա-

տարածուած ձեռնարկն էր, ամէն մի փորձ այդ դասագրքի մէջ որևէ է փոփոխութիւն մոցնել՝ հեշտացնելու գիտաւորութեամբ, հերձուածողութիւն էր համարուում, նա դրուած էր լատիներէն, մի վիպերգութիւն էր գա 12 հազներգութեամբ, ուր ոտանաւորով բացարուած էրն ստուգարանական և համաձայնական կանոնները, Այստեղ միտքը բոլորովին զոհուած էր շափական և յանգիտութեան կանոններին, Այդ դասագրքով սովորողները նմանեցնում են նրան մի բաւիղի, ուր Պիտուարոսն էր բնակում, Այդ ժամանակուայ դասագրքերի մասին գաղափար կազմելու համար աւելորդ չի լինել մէջ բերել մի կտոր մեծ հոչակ ունեցող քերականութիւնից, Հարց — Es tu scolaris? Պատասխան — Sim, (Ըաշակերտ ես. — Ա, յո), — Ի՞նչու սոյ չի վերջանում ոչ և ոչ օր: — Որպէս զի միւս բայերի վրայ ունեցած գերազանցութիւնը ցոյց տայ, — Ի՞նչպէս կրացարեն այդ: — Sim երրորդութիւն է ցոյց տալիս նրա մէջ երեք տառ կայ, — Ի՞նչու Սոյ վերջանում է ու ոչ ու: — Որովհետև ուն էլ ցոյց է տալիս երրորդութիւն, ու ունի երեք գիծ: Es tu scolaris? — Sim. — Ըուռ տուր Սոյ. — Mus. — Ի՞նչ է նշանակում Mus. — Մուկի. — Ի՞նչ բան է աշակերտ — Մի մարդ որ մեծ ժանախրութեամբ ուսանում է առաքինութիւններ: — Եւ այս բոլորը պէտք էր իմանալ բերան՝ բառ առ բառ: Բայց և այնպէս գա խառ ու պար էր թուարանութեան առաջ: Որ գարծեալ հագներգութիւններով մի վիպերգութիւն էր, ուսանաւոր գրած, որից մի պարզ բաժանման գործող դութիւն հասկանալու համար հարկաւոր էր գերազակային համբերութիւնն և սրամութիւնն: Այս մտաւոր տանջանքները որքան էլ ծանր են, սակայն աւելի ևս անհաւատալի և աներևակայելի կիթուիններկայ ժամանակի մարդու համար մարմնական այն պատիճներն ու տանջանքները, որոնցից չէր կարող զերծ մնալ միջնադարեան գլուղի ոչ մի ուսանող որքան էլ լոնդունակ լիներ նա դասերի մէջ և վարքով անմեղ՝ այնուամենայնիւ պիտի կրեր: Միայն այդ նկարագիրը կարգալով հասկանալի է դառնուում այս յօդուածիս սկզբի դրած արիւն, քրտինք, տանջանքը բառերի գործածութեան պատճառը:

U. Յ.

— 31 —

ՄԱՆՐԵԼՈՒԹԻՒՆ.

Համալսարանական դրա զարան ներկայացման հարաբեկան կողմէց նրանապայում աւամին տեղը ուղարկում է գնորմանին, որի քան գրադարանն էրում 5, 830, 000 հատոր գիր կայ երեք մէլիոնով աւելի քան հատակու գրադարաններում, որ երկորու տեղն է ընդում: Ազգին, Աստուի և Ռուսաստան՝ իրաքանչիւթեան 4,800,000 հատորի աւելի ունին Շվեյցարիայի 790, 000, Սպանիա 726, 000, Աւստրալիան արժանի է այն համագումարը, որ